ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 օգոստոսի 1997թ. N8
քաղ. Երևան

1997/98թթ. ձմռան ժամանակաշրջանում կենտրոնացված ջեռուցման սակագների մասին

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Էներգետիկայի մասին» օրենքով և հաշվի առնելով կենտրոնացված ջեռուցման և ՋԷԿ-երից ջեռուցման նպատակով տաք ջուր մատակարարող համակարգերի անվտանգ շահագործման և բնակչությանը ջեռուցմամբ ապահովելու անհրաժեշտությունը.

1. Սահմանել ջեռուցման նպատակով ՋԷԿ-երից «Ջերմային ցանցեր» ՊՁ-ին վաճառվող տաք ջրի հետևյալ սակագները (ներառյալ ավելացված արժեքի հարկը).

   – Երևանի ՋԷԿ-ի համար՝ 6480 դր/գկալ
   – Հրազդանի ՋԷԿ-ի համար՝ 6720 դր/գկալ

2. Սահմանել ջեռուցման նպատակով սպառողներին «Ջերմային ցանցեր» ՊՁ-ի կողմից ըստ բնակավայրերի տրվող տաք ջրի հետևյալ սակագները (ներառյալ ավելացված արժեքի հարկը)՝

   – ք. Երևան՝ 8620 դր/գկալ
   – ք. Գյումրի՝ 8350 դր/գկալ
   – ք. Հրաղդան՝ 8670 դր/գկալ

3. Սահմանել ըստ բնակավայրերի կենտրոնացված ջեռուցման սակագները (հավելված):

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 1997թ. սեպտեմբերի 21-ից:

ՀՀ էներգետիկայի
հանձնաժողովի նախագահ՝ **Վ. Մովսեսյան**

Հավելված
ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի
1997թ. օգոստոսի 22-ի հ.8 որոշման

1997/98թթ. ձմռան ժամանակաշրջանի կենտրոնացված ջեռուցման սակագները ըստ բնակավայրերի

N	Բնակավայրի անվանումը	Ջեռուցման տևողությունը օր	Բնակչությանը 1 ք.մ բնակելի մակերեսի ջեռուցման համար դր / քմ	Այլ սպառողների ջեռուցման համար դր/գկալ
1	Երևան	90	1487	10966
2	Գյումրի	120	2923	11128
3	Աբովյան	90	1349	9484
4	Հրազդան	120	2109	10633
5	Վեդի	90	1649	13076
6	Մասիս	90	1780	14261
7	Սևան ք.	120	1696	8371
8	Գավառ	120	2021	10415
9	Ծամբարակ	120	2788	15622
10	Մարտունի	120	1625	8766
11	Վանաձոր	100	1416	10109
12	Չարենցավան	100	1413	8976
13	Ջերմուկ	120	1678	8461
14	Արմավիր	90	1240	9591
15	Իջևան	70	873	10647
16	Նոր Հաճն	90	1340	9419
17	Էջմիածին	90	1031	8221
18	Կապան	70	1027	13009
19	Սիսիան	120	2696	15952
20	Մեղրի	70	1222	15979
21	Ագարակ	70	1081	14134
22	Գորիս	90	1820	15291

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի
նախագահ՝ Վ. Մովսեսյան